

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական Ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


- 2018թ հունվարին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 10.2% (YoY) աճ: Աճ է գրանցվել տնտեսության բոլոր ոլորտներում՝ բացառությամբ գյուղատնտեսության: Նախորդ ամսվա նկատմամբ ակտիվության աճ է գրանցվել հատկապես շինարարության և առևտրաշրջանառության ոլորտներում:
- Շինարարության ոլորտում 2018թ հունվարին տարեկան կտրվածքով գրանցվել է 19.7% աճ (YoY), իսկ ներքին առևտրաշրջանառությունն աճել է 17.3%-ով (YoY): 2017թ նոյեմբերից ՀՀ ԱՎԾ կողմից սկսել են հաշվառվել Ամուլսարի հանքավայրի շինարարության շրջանակներում կատարվող աշխատանքները, ինչի հաշվին շինարարության ոլորտի թողարկման ծավալների ցուցանիշները սկսել են բարելավվել:
- 2017թ հունվարի նկատմամբ արդյունաբերության ոլորտում աճը կազմել է 13.9% (YoY)՝ թողարկված արտադրանքի ծավալը հասնելով 128.2 մլրդ դրամի: 2017թ դեկտեմբերի նկատմամբ ոլորտում գրանցվել է 25% անկում (MoM):
- Ծառայությունների ծավալը նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճել է 15.2%-ով (YoY)՝ կազմելով 111.4 մլրդ դրամ: Նախորդ ամսվա նկատմամբ ոլորտում գրանցվել է 21.6% (MoM) անկում:



- Գյուղատնտեսության ոլորտում 2017թ հունվարի նկատմամբ անկումը կազմելով 0.4%(YoY)՝ արտադրանքի ծավալը նվազելով մինչև 17.5 մլրդ դրամ:
- Առհասարակ, նախորդ տարվա վերջին եռամսյակից դիտվող տնտեսական ակտիվության աճը բացատրվում է տարվա ընթացքում ԿԲ կողմից իրականացվող խթանող դրամավարկային քաղաքականությունը, տնտեսության վարկավորման ծավալների աճը, ՌԴ-ից դրամական փոխանցումների ակտիվացումը՝ վերջինիս տնտեսության վերականգնման ֆոնին:

Արդյունքում գրանցվում է մասնավոր սպառման և ներդրումների ակտիվացում: 2017թ չորրորդ քառորդում վերջիններիս աճը, ըստ ՀՀ ԿԲ տվյալների, նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 18.2% և 23%: Իսկ ՀՀ Կառավարության տվյալների համաձայն 2017թ ՀՀ-ում իրականացվել են 586.5 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր

2017թ ՀՀ-ում իրականացված ներդրումային ծրագրեր




ծավալով ներդրումային ծրագրեր, որի 68%-ը կազմել են մասնավոր ներդրումները: ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մարզպետարանների աջակցությամբ մարզերում, իրենց հերթին, իրականացվել են շուրջ 170մլն ԱՄՆ դոլար ծավալով ներդրումային ծրագրեր:

Գնային միջավայր


- Տնտեսական ակտիվությունը երկրում նպաստում է նաև գնաճի ակտիվացմանը: Բացի ներքին պահանջարկի վերականգնումից երկրում գնաճին են նպաստել նաև պարենային ապրանքների միջազգային շուկայում գրանցված գնաճն ու ՀՀ-ում կատարված հարկային ու մաքսային փոփոխությունները: 2018թ հունվարից ավելացավ թռչնամսի, կարագի, ձեթի և մի շարք այլ ապրանքների մաքսատուրքը: Բարձրացան նաև սպիրտային խմիչքների, ծխախոտի և վառելիքի համար ակցիզային հարկի դրույքաչափերը: 2018թ առաջին եռամսյակում, սակայն, գնաճային սպասումների լրացուցիչ աճը չեզոքացել է:

- 2018թ հունվարին գրանցված 2.7% տարեկան գնաճին փետրվարին հաջորդեց 3.3% գնաճ (YoY), այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 4.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 4.6%, ծառայությունների սակագներինը՝ 1.6%:
- Նախորդ ամսվա նկատմամբ փետրվարին դիտվել է 0.5% (MoM) գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 1.2% գնանկումով:
- Նշենք, որ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված նախատեսվում է մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխություն, ինչի արդյունքում կգրանցվի սպառողական զամբյուղի շուրջ 30 անուն ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի դրույքաչափերի աճ, որի ազդեցությունը գնաճի վրա 2018թ առաջին եռամսյակում գնահատվում է՝ 0.4 տոկոսային կետ, իսկ տարվա կտրվածքով ակնկալվող ընդհանուր ուղղակի ազդեցությունը գնահատվում է 0.92 տոկոսային կետ:




ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 59.6 մլրդ դրամ, ծախսերը՝ 56.7 մլրդ դրամ:
- ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 2.9 մլրդ դրամ:
- 2018թ. ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և տուրքեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:




- ՀՀ պետական պարտքն 2018թ հունվարի տվյալներով կազմել է շուրջ 6.9 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 15.4%-ով (YoY) և մոտ 1.8%-ով՝ 2017թ դեկտեմբերի արժեքը:
- Միայն արտաքին պարտքը հունվարի 31-ի դրությամբ կազմել է 5.57 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա նկատմամբ ավելանալով 1.5%-ով (MoM): Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ ամսվա նկատմամբ ավելացել է 3%-ով (MoM)՝ կազմելով 1.32 մլրդ ԱՄՆ դոլար:
- Հաշվի առնելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ բնակչության մեկ շնչի հաշվով պարտքը կազմում է 2,312.5 ԱՄՆ դոլար (2017թ երրորդ քառորդի տվյալներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2,982,900 մարդ):



ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ


Արտաքին առևտուր


- 2018թ հունվարին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 504.2 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 47.6%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 45.2%՝ հասնելով 176.7 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 48.9%-ով (YoY)՝ մինչև 327.5 մլն ԱՄՆ դոլար:
- 2017թ դեկտեմբերի նկատմամբ 2018թ հունվարին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշը կրճատվել է 26.8%-ով (MoM): Ընդ որում՝ արտահանման ծավալները նվազել են 23.8%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 28.4%-ով (MoM):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը հունվարին խորացել է մինչև -150.8 մլն ԱՄՆ դոլար:



Դրամական հոսքեր


- 2018թ հունվարին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա հունվարի նկատմամբ կրճատվել է ավելի քան կրկնակի՝ կազմելով 20.3 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ կրճատվել է մոտ 4 անգամ, ինչը կրում է սեզոնային բնույթ:
- Նշենք, որ ՌԴ տնտեսության վերականգնման հետ մեկտեղ 2017թ երկրորդ կեսին աճել են նաև ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումները:





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- ՀՀ ԿԲ կողմից 2017թ վարած անընդմեջ խթանող դրամավարկային քաղաքականությունն, ինչպես նաև բանկային համակարգում իրացվելիության ծավալներն իրենց ազդեցությունն են ունեցել ինչպես առևտրային բանկերի կողմից տրամադրված, այնպես էլ ստացված միջոցների ծավալների աճի, այնպես էլ տոկոսադրույքների նվազման վրա:





- 2018թ փետրվարի 13-ին կայացած նիստում ևս ՀՀ ԿԲ Խորհուրդն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 6%՝ հաշվի առնելով տնտեսական ակտիվության և պահանջարկի վերականգնման կայունության կարևորությունն ու գնաճային սպասումների որոշ մասի կարճաժամկետ բնույթը:
- 2018թ հունվարին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված դրամային վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 17%-ով, արտարժույթայինը՝ 10.5%-ով (YoY), իսկ ավանդներինը համապատասխանաբար 20.1% և 4.4%-ով (YoY):
- Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա դրամով վարկերի միջին տոկոսադրույքը 2017թ հունվարի նկատմամբ 2018թ հունվարին նվազել է շուրջ 3 կետով՝ մինչև 13.7% մակարդակը, արտարժույթային վարկերինը՝ 1 կետով՝ մինչև 8.1%, դրամային ավանդների

տոկոսադրույքների միջին մակարդակը նախորդ տարվա սկզբի 10.7%-ից 2018թ հունվարին նվազել է մինչև 9.4%, իսկ արտարժույթայիններին՝ 5%-ից մինչև 4.1%:

- Պետական պարտատոմսերի շուկայում պահպանվում է եկամտաբերությունների նվազման միտումը: Նախորդ տարվա սկզբին առկա դրության հետ համեմատած 2018թ սկզբին պետական պարտատոմսերի

եկամտաբերությունները նվազել են կորի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:




ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- **EUR/USD:** Հիմնական փոխարժեքների վրա 2018թ. փետրվար ամսվա ընթացքում և մարտ ամսվա առաջին կեսին մեծ էր և՛ տնտեսական և՛ քաղաքական գործոնների ազդեցությունը: Մասնավորապես, EUR/USD փոխարժեքն 2018թ. փետրվար ամսվա ընթացքում կտրուկ տատանումներ գրանցելով ամսվա կտրվածքով նվազեց մոտ 1.83%-ով,


մինչդեռ արդեն մարտ ամսվա առաջին կեսին վերջինիս աճը կազմել է մոտ 1.39%: ԵԿԲ մարտյան նիստում որոշվեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները պահպանել անփոփոխ. վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0.00%, ավանդադրման տոկոսադրույք՝ -0.4%: Ընդհանուր առմամբ ԴՎԲ պահպանումն անփոփոխ ու ԵԿԲ նախագահ Մ. Դրագիի հայտարարությունների առավելապես մեղմ տոնը նպաստեցին ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի փոխարժեքի




թուլացմանը, սակայն միևնույն ժամանակ վերջին ամիսներին ԵՄ տնտեսության առանձին հատվածներում գրանցվող դրական տեղաշարժերն առաջիկայում խթանող քաղաքականության կուրսի փոփոխման սպասումների հետ մեկտեղ շարունակում են աջակցություն ցույց տալ եվրոպական արժույթին:

- ԱՄՆ դոլարի համար որպես հիմնական շարժիչ ուժ շարունակում է հանդես գալ ՖՊՀ առաջիկա նիստում ԴՎԲ բազային տոկոսադրույքի բարձրացման սպասումների աճը: Ընդհանուր առմամբ ԱՄՆ աշխատանքի շուկան մոտեցել է լրիվ զբաղվածության, իսկ ինֆլյացիայի տեմպերը մոտեցել են նպատակային մակարդակին, ինչը բավարար հիմքեր է ստեղծում ՖՊՀ արդեն մարտյան նիստում ԴՎԲ խստացման համար:
- **GBP/USD:** Փետրվարի 8-ին կայացավ Անգլիայի Բանկի հերթական նիստը և հրապարակվեց ԴՎԲ տոկոսադրույքի վերաբերյալ որոշումը: Տոկոսադրույքը պահպանվեց նախկին՝ 0.5%, մակարդակում: ԴՎԲ Կոմիտեի անդամները հայտարարեցին, որ եթե տնտեսությունն ընդհանուր առմամբ զարգանա կանխատեսումներին համապատասխան, ապա տոկոսադրույքի բարձրացում կլինի ավելի շուտ և ավելի մեծ չափով, ինչը հանգեցրեց բրիտանական արժույթի կտրուկ արժևորման. GBP/USD զույգը գրանցեց մոտ 1.3% աճ՝

դեպի վեր հատելով 1.4058 արժեքը: Անգլիայի Բանկը բարձրացրել է ՀՆԱ աճի վերաբերյալ կանխատեսումները և այժմ առաջիկա երեք տարիներին ՀՆԱ միջին աճը կանխատեսվում է՝ 1.75%: Նշենք, որ Անգլիայի Բանկը վերջին 10 տարիների ընթացքում առաջին անգամ ԴՎԲ տոկոսադրույքը բարձրացրել էր 2017թ. նոյեմբերին և հայտարարել, որ առաջիկա երեք տարիներին սպասվում է ևս 2-անգամյա բարձրացում: Փետրվար ամսվա սկզբից գրանցված կտրուկ աճն արդեն ամսվա վերջում ամբողջովին չեզոքացվեց ԱՄՆ դոլարի ուժեղացման և Մեծ Բրիտանիայի մի շարք բացասական մակրոցուցանիշների հրապարակման ֆոնին և արդյունքում՝ GBP/USD զույգն 2018թ. փետրվար ամիսը փակեց մոտ 3% անկմամբ (բրիտանական արժույթի վրա շարունակում է բացասաբար ազդել նաև Brexit-ի հետ կապված անորոշությունը): Տարվա սկզբից նվազել են Մեծ Բրիտանիայի մանրածախ առևտրի ծավալների աճի տեմպերը, վատթարացել է առևտրային հաշվեկշիռը, նախնական տվյալների համաձայն 2017թ. 4-րդ եռամսյակում ՀՆԱ աճի տեմպերը զիջում են նախորդ եռամսյակի և կանխատեսվող աճի տեմպերին, բացասական տեղաշարժեր են գրանցվել արդյունաբերության և շինարարության ոլորտներում, իսկ գործազրկության մակարդակը նախորդ 4.3%-ից աճել է մինչև 4.4%: Հարկ է նշել, սակայն, որ արդեն մարտ ամսվա առաջին կեսին GBP/USD փոխարժեքը վերականգնվել է մոտ 1.26%-ով:




- **USD/RUB:** Ռուսական ռուբլին փետրվար ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դիրքերը թուլացրեց մոտ 0.22%-ով, իսկ մարտ ամսվա առաջին կեսին արդեն գրանցել է ևս 1.41% անկում: Փետրվարյան նիստում ՌԴ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքը 7.75%-ից նվազեցվեց մինչև 7.50%:




ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- Նավթի շուկա:** Brent տեսակի նավթի մեկ բարելի գինն 2018թ. փետրվարին գրանցեց մոտ 4.74% անկում՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալների և նավթային պաշարների աճով: Ներկայումս ՕՊԵԿ-ի անդամ և այլ նավթ արդյունահանող երկրների կողմից առաջարկի կրճատմանն ուղղված գործողությունների ազդեցությունը չեզոքացվում է ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալների աճով (զգալիորեն ավելացել է նաև ակտիվ նավթահորերի թիվը): Փետրվարյան անկումից հետո նավթի գները փոքր-ինչ վերականգնվեցին մարտ ամսվա առաջին կեսին (մոտ 0.53%)՝ մարտի 15-ին փակվելով 65.1 ԱՄՆ դոլար բարելի դիմաց արժեքում:



- Ոսկու շուկա:** Ամբողջ փետրվար ամսվա ընթացքում կտրուկ տատանումներ գրանցեցին ոսկու գները՝ ամսվա կտրվածքով փակվելով մոտ 1.88% անկմամբ: Անկումային դինամիկան պահպանվեց նաև մարտ ամսվա առաջին կեսին (-0.28%): Ոսկու գնի վրա բացասաբար են անդրադառնում ԱՄՆ ՖՊՀ կողմից ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման սպասումները և այդ ֆոնին ԱՄՆ դոլարի ուժեղացումը, ինչը մի կողմից այլ արժույթներ տիրապետողների համար դոլարով գնանշվող ոսկին դարձնում է առավել դժվար հասանելի և մյուս կողմից տոկոսադրույքների բարձրացման հեռանկարներն ավելացնում են ռիսկի նկատմամբ հակվածությունը՝ հանգեցնելով «հուսալի» ակտիվների, այդ թվում՝ նաև ոսկու նկատմամբ պահանջարկի նվազման:



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ												
	ԱՄՆ			ԵՄ			Մեծ Բրիտանիա			ՌԴ		
	Վերջին տվյալ		Նախորդ	Վերջին տ.		Նախ.	Վերջին տ.		Նախ.	Վերջին տ.		Նախ
Իրական հատված												
ՀՆԱ աճ (եռամսյակային՝ QoQ)	4եռ	2.5%*	2.6%*	4եռ	0.6%*	0.6%	4եռ	0.4%*	0.5%			
ՀՆԱ աճ (տարեկան՝ YoY)	4եռ	2.5%	2.3%	4եռ	2.7%	2.7%	4եռ	1.4%*	1.5%	III եռ	1.8%	1.8%
Արդյունաբերության ոլորտի PMI	Փտ	55.9	55.5	Փտ	58.5	59.6	Փտ	55.2	55.3*1	Հվ	55.1	56.8
Ծառայությունների ոլորտի PMI	Փտ	55.9	55.9	Փտ	56.2	56.7	Փտ	54.5	54.2	Փտ	56.5	55.1
Բաղադրյալ PMI	Փտ	55.8	55.9	Փտ	57.1	57.5	Հվ	55.9	55.1			
Աշխատանքի շուկա												
Գործազրկության մակարդակ	Փտ	4.1%	4.1%	Նյ	8.7%	8.8%	Դկ	4.4%	4.3%	Հվ	5.2%	5.1%
Գործազրկ. նպաստի համար դիմումների թվի փոփոխություն	Փտ	313հզ.	239 հզ.	-	-	-	-	-	-	-	-	-
Զբաղվածների թիվ (բացառ. գյուղատնտեսական ոլորտ)	Հվ	200հզ.	160հզ.*	-	-	-	-	-	-	-	-	-
Գնաճ												
ՍԳԻ (ամսական՝ MoM)	Հվ	0.5%	0.2%	Հվ	-0.9%	0.4%	Հվ	-0.5%	0.4%	Փտ	0.2%	0.3%
ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Հվ	2.1%	2.1%	Փտ	1.2%*	1.3%	Հվ	3.0%	3.0%	Փտ	2.2%	2.2%
Core ՍԳԻ (ամսական՝ MoM)	Հվ	0.3%	0.2%*	Հվ	-1.7%	0.5%						
Core ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Հվ	1.8%	1.8%	Փտ	1.0%*	0.9%	Հվ	2.7%	2.5%			
Առևտուր/սպառում												
Մանրածախ առևտուր (ամսական՝ MoM)	Հվ	-0.3%	0.4%*	Հվ	-0.1%	-0.1%	Հվ	0.1%	-1.4%*			
Մանրածախ առևտուր (տարեկան՝ YoY)	Նյ	5.8%	4.6%	Հվ	2.3%	2.1%*	Հվ	1.6%	1.5%*	Հվ	2.8%	3.1%
Սպառողների վստահության ինդեքս	Փտ	130.8	124.3*	Հվ	1.3	1.3	Դկ	-13	-12	Յեռ	-11	-14
Արտաքին հատված												
Առևտրային հաշվեկշիռ (մլրդ ԱՄՆ դոլար/եվրո/ֆունտ/ռուբլի)	Դկ	-71.58	-69.99	Դկ	25.4	26.3	Հվ	-12.32	-11.77	Դկ	13.70	11.52
Տոկոսադրույքներ												
Վերաֆինանսավորման %	Դկ	1.25%-1.5%	1%-1.25%	Հվ	0.0%	0.0%	Դկ	0.50%	0.25%	Փտ	7.50%	7.75%
Ավանդադրման %				Հվ	-0.4%	-0.4%						

¹ * - ցուցանիշի վերանայում բացասական ուղղությամբ, * - ցուցանիշի վերանայում դրական ուղղությամբ, * - ցուցանիշի նախնական տվյալ